# ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) պատվիրակությամբ «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոց և 500 մանկապարտեզ» ծրագրի շրջանակում Հիմնադրամի շինարարության որակի տեխնիկական հսկողության վարչության կողմից տեխնիկական հսկողություն է իրականացվում 116 շինարարական օբյեկտում, այդ թվում՝ 103 դպրոցում, 11 մանկապարտեզում, 1 մարզադպրոցում և 1 բժշկական կենտրոնում:

Համապատասխան շինարարական հրապարակներում տեխնիկական հսկողություն է իրականացնում 45 տեխնիկական հսկիչ, որոնցից 17-ն ունի բնակելի, հասարակական և արտադրական կառույցների ճարտարագետ-տեխնիկական հսկիչի, իսկ 5-ը՝ շինարարության ոլորտի այլ մասնագիտական որակավորմամբ սահմանված 1-ին կարգի հավաստագիր:

Ընդհանուր առմամբ, բոլոր տեխնիկական հսկիչներն ունեն բարձրագույն մասնագիտական կրթություն և աշխատանքային փորձառություն:

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝ ՆՈՐԱՅՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ